ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

Գեղեցիկ Արուեստները խրախուսող Թիֆլիսի ընկերութիւնը Զինուորական Թանգարանում բաց արաւ իւր պարբերական պարահանդէսը ամսոյս 14-ին։ Հանդիսի բացումը անշուք էր, ոչ սովորական մաղթանք, ոչ ճառախօսութիւն։ Մի քանի տեղական նկարիչներ դիմաւորեցին փոքրաթիւ հիւրերին, առաջնորդելով նրանց դէպի Թանգարանի երկթեանի շինութիւնը։

Իցոյց են դրուած աւելի քան 200 մեծադիր և փոքրադիր նկարներ և քանի չափ անդրիագործական իրեր։ Նկարների մէջ աչքի են ընկնում քանակութեամբ մեր հին ծանօթների պ. պ. Բաշինջաղեանի, Զօմմերի, Զախարովի, Ցակոբեանի, Ֆօգելի և այլոց գործերը։ Տիրապետում է պէյզաժը։ Ժանրային նկարներ շատ քիչ կան։ Պատկերներ բաւականաչափ են. ընդհանուր առմամբ ներկայ պատկերահանդէսը գործում է իւր նախորդների տպաւորութիւնը, նոր բաներ դրեթէ չկան։ Այնուամենայնիւ, հետևեալ անգամ կը յայտնենք մեր կարծիքը պատկերահանդէսի մասին որքան ևս այն աղքատիկ լինի։

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԴԱՄԱՆԴԻ ԳՈՑՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԲԱԴԻԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՄԲ։ Արդէն յայտնի է, որ Թանկագին քարերը, Բադդի ճառագայթների ազդեցութիւնից, փայլում են մթութեան մէջ։ Բայց Բադդիի ազդեցութիւնը դորանով չէ բաւականանում։ Ամառս պ. Վիլիամ Կրուկսը այդ բանին վերաբերեալ շատ հետաքրքրական փաստեր ներկայացրեց Լոնդոնի կայսերական խորհրդի նիստին։ Կրուկսը վերցրեց երկու ադամանդ Ա. O, 960 գրան և Բ. O,020 գրան ծանրութեամբ, համարեա թէ միևնոյն մեծութեան և միևնոյն բաց դեղին գոյնի ու հետևեալ փորձերը կա-